ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ապրիլի 2022 թվականի №----Ա
քաղ. Երևան

«ՔՈՆԹՈՒՐԳԼՈԲԱԼ ՀԻԴՐՈ ԿԱՍԿԱԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2022-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետը և 28-րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության 2022-2024 թվականների ներդրումային ծրագրին՝ համաձայն №№1-7 հավելվածների:
2. Ընդունել ի գիտություն, որ «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության 2022-2024 թվականների ներդրումային ծրագրի արժեքը կազմում է 9 035,4 մլն դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի՝ հետևյալ հիմնական ուղղություններով.

1) պատվարների և հիդրոտեխնիկական կառուցվածքների վերաբերյալ տվյալների հավաքագրում, դրանց վերականգնման նախագծային փաստաթղթերի կազմում և կայունության ամրապնդում՝ 1 264,4 մլն դրամ,

2) «Տաթև» հիդրոէլեկտրակայանի օրական կարգավորման ջրավազանի (ՕԿՋ) վերականգնման նախագծային փաստաթղթերի կազմում և վերակառուցում՝ 635,1 մլն դրամ,

3) շրջակա միջավայրի պահպանություն, աշխատանքի պաշտպանության և տեխնիկական անվտանգության ոլորտի գործառույթների բարելավում՝ 1 425,5 մլն դրամ,

4) «Տաթև» հիդրոէլեկտրակայանի բանվորական անիվի փոխարինում՝ 221,8 մլն դրամ,

5) «Տաթև» հիդրոէլեկտրակայանի գեներատորների ռոտորների բևեռների, եզրակների և լիսեռի ձեռքբերում՝ 2 675,4 մլն դրամ,

6) «Շամբ» հիդրոէլեկտրակայանի ուժային տրանսֆորմատորների փոխարինում՝ 1 456,0 մլն դրամ,

7) հիդրոէլեկտրակայանների շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 1 357,2 մլն դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ապրիլի 2022թ.